ՀՆԱԳՈՒՅՆ ԱԶԳԵՐԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷՋԵՐԸ

ԱՄՓՈՓԻՉ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խմբավորի՛ր բառերը՝ ըստ բառապաշարի շերտերի:

Նվագավար, վիզ, քնքշաբույր, ծով, աչքածակ, կենսաժպիտ, քաղցր, քաղաք, գեղեցիկ, փչան, սսկվել, մարմանդ, գեղարդ, սպիտակ, տխրահնչյուն, ոսկեհանդերձ, խելառ, կոտոշ, գզվռտոց, նվնվալ, երկրակեղև, պարեգոտ, քեֆ, սիրտ, երիտասարդ, արևահամ, ջրահարս, վիշապաձայն:

Հիմնական բառապաշար	Խոսակցական բառապաշար	Գրքային բառապաշար

2. Երկսյուն աղյուսակում դասավորի՛ր ուղիղ և փոխաբերական իմաստներով գործածված բառակապակցությունները:

Բարի մարդ, *բարի հոգի*, *պայծառ միտք*, *պայծառ արև*, *խաղաղ բնակավայր*, *խաղաղ երկինք*, *թթու դեմք*, *թթու վարունգ*, *ծանր խոսք*, *ծանր բեռ*, *մեծ քաղաք*, *մեծ լռություն*:

Ուղիղ իմաստ	Փոխաբերական իմաստ

3. Ցո՛ւյց տուր չափազանցության դերը «Սասնա ծռեր» էպոսում: